Luys Lույս®

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅԱՆ ԻՆԴԵՔՍ

Հաշվետվություն Համաշխարհային տնտեսական համաժողովի կողմից հրապարակված «Գլոբալ սոցիալական շարժունության ինդեքս - 2020» զեկույցի հիման վրա

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐ 1

2. ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ 3

3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱՄԱԴՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ 6

4. ԱՄՓՈՓՈՒՄ 11

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Չորրորդ արդյունաբերական հեղափոխությունը էապես փոխել է աշխարհի երկրների մեծ մասի սոցիալական, տնտեսական և քաղաքական համակարգերի օրինաչափությունները: Անվիճելի է, որ արագ տեխնոլոգիական զարգացումների պայմաններում ստեղծվել են նոր հնարավորություններ մարդկանց կենսամակարդակի բարելավման համար: Սակայն ակնհայտ է նաև, որ տեխնոլոգիաների գերակայության և լայնամասշտաբ ռոբոտիզացիայի հետևանքով մարդկությունը բախվել է լրջագույն մարտահրավերների:

Վերջին 4 տասնամյակների ընթացքում համաշխարհային տնտեսությունում արձանագրված առանցքային ձեռքբերումներից մեկը աղքատության մակարդակի շոշափելի կրճատումն է: Իսկապես, եթե 1980 թվականին ծայրահեղ աղքատ էր աշխարհի բնակչության շուրջ 44%-ը, ապա 2020-ի դրությամբ այս ցուցանիշը տատանվում է 8.6%-ի շրջակայքում: Այս միտումը, իհարկե, կապված է գիտատեխնիկական առաջընթացի հետ, ինչը նպաստել է տնտեսական աճի տեմպի կայունացմանը՝ տնտեսական գործընթացներում ընդգրկելով բնակչության նորանոր հատվածների:

Այդուհանդերձ, վերջին 4 տասնամյակներում համաշխարհային տնտեսությունը բնորոշվել է նաև սոցիալական անհավասարության խորացմամբ, ինչը առանձին երկրներում ուղեկցվել է հասարակական համերաշխության խաթարման դրսևորումներով: Բացի տեխնոլոգիաների գործոնից, ներկայիս անհավասարությունը պայմանավորված է նաև նախորդ դարի 80-ական թվականներից մեծ տարածում ստացած տնտեսագիտական գաղափարախոսությամբ, որը հայտնի է «առաջարկի տնտեսագիտություն» անվանմամբ: Վերջինս խրախուսում է տնտեսահրավական կարգավորումների թուլացումը, պետական մասնակցության կրճատումը, հարկադրույքների նվազեցումը: Ժամանակը, սակայն, ցույց տվեց, որ տնտեսական քաղաքականության այս մոդելը կարող է գեներացնել բարձր տնտեսական աճ միայն եկամուտների բաշխման բնագավառում էական խեղումների առաջացման գնով:

Եկամուտների անհավասարության խնդրահարույց հետևանքներից է հնարավորությունների անհավասարությունը (inequality of opportunities) կամ, որ նույնն է, սոցիալական շարժունության (social mobility) ցածր մակարդակը: Վերջինս ենթադրում է, որ անհատի սոցիալական կարգավիճակը կյանքի տարբեր փուլերում կախված է ոչ այնքան իր վարքագծից և որոշումներից, որքան այնպիսի (նախապես տրված) գործոններից, ինչպիսիք են տվյալ անհատի ազգությունը, ռասսայական պատկանելությունը, ծննդավայրը, ծնողների եկամուտները և այլ

հնարավորությունները: Նման հասարակություններում աղքատ ընտանիքում ծնված անհատի՝ «սոցիալական սանդուղքով» բարձրանալու հնարավորությունները բավական սահմանափակ են:

Հաշվի առնելով վերոհիշյալը և նպատակ ունենալով գնահատել սոցիալական շարժունության և հնարավորությունների հավասարության մակարդակը աշխարհի տարբեր երկրներում՝ Համաշխարհային տնտեսական ֆորումի մասնագետները 2020 թվականին ձեռնամուխ են եղել նոր միջազգային ինդեքսի ձևավորման աշխատանքներին: Հաշվարկները և արդյունքները ամփոփված են «Գլոբալ սոցիալական շարժունության ինդեքս - 2020» զեկույցում, որտեղ դիտարկվել է 82 երկիր: Համաձայն այս զեկույցի՝ հնարավորությունների հավասարության մակարդակով աչքի են ընկնում սկանդինավյան երկրները, մասնավորապես՝ Դանիան, Նորվեգիան, Ֆինլանդիան, Շվեդիան և Իսլանդիան: Վատագույն կատարողականը ցուցաբերել են Բանգլադեշը, Պակիստանը, Կամերունը, Սենեգալը և Կոտ դ'Իվուարը:

Ինչ վերաբերում է Հայաստանի Հանրապետությանը, ապա այն Հարավկովկասյան տարածաշրջանի՝ զեկույցի հաշվարկներում ընդգրկված 3 երկրների շարքում 2020-ի դրությամբ զբաղեցրել է երկրորդ տեղը (54 միավոր, 56-րդ հորիզոնական)՝ զիջելով Վրաստանին (56 միավոր, 53-րդ հորիզոնական) և գերազանցելով Թուրքիային (51 միավոր, 64-րդ հորիզոնական): Մյուս կողմից, ԵԱՏՄ տարածքի՝ զեկույցի հաշվարկներում ընդգրկված 3 երկրների շարքում Հայաստանը վերջինն է՝ զիջելով Ղազախստանին (65 միավոր, 38-րդ հորիզոնական) և Ռուսաստանին (65 միավոր, 39-րդ հորիզոնական):

2. ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Սոցիալական շարժունության ինդեքսը հիմնված է 10 հենասյուների վրա, որոնք խմբավորվում են հետևյալ 5 ենթաինդեքսներում՝ առողջություն, կրթություն, տեխնոլոգիաներ, աշխատանք և ինստիտուտներ (Աղյուսակ 1):

Աղյուսակ 1. Սոցիալական շարժունության ինդեքսի բաղկացուցիչները

→	Առողջություն
1	Առողջություն
→	Կրթություն
2	Կրթության հասանելիություն
3	Կրթության որակ
4	Մշտական ուսուցում (Lifelong learning)
→	Տեխնոլոգիաներ
5	Տեխնոլոգիաների հասանելիություն
→	Աշխատանք
6	Աշխատանքի հնարավորություններ
7	Աշխատավարձերի արդարացի բաշխում
8	Աշխատանքի պայմաններ
→	Ինստիտուտներ
9	Սոցիալական պաշտպանություն
10	Ներառական ինստիտուտներ

10 հենասյուներից յուրաքանչյուրը իր հերթին ստացվում է որոշակի ցուցանիշների ագրեգացման արդյունքում: Քանի որ ցուցանիշները ունեն տարբեր չափման միավորներ, անհրաժեշտ է դրանք ստանդարտացնել՝ բերելով 0-100 մասշտաբի: Ստանդարտացումը կատարվում է հետևյալ բանաձևով.

$$\left(\frac{\text{արժեք}_{i,c} - \text{նվազագույն}_i}{\text{առավելագույն}_i - \text{նվազագույն}_i}\right) \text{x } 100,$$

որտեղ $\text{արժեք}_{i,c}$-ն i ցուցանիշի արժեքն է c երկրի պարագայում, նվազագույն_i-ն՝ i ցուցանիշի փոքրագույն ընդունելի արժեքը, իսկ առավելագույն_i-ն՝ i ցուցանիշի մեծագույն հնարավոր արժեքը:

Կախված ցուցանիշից՝ որպես առավելագույն_i-ն կարող է դիտարկվել տնտեսական քաղաքականության որևէ ուղղության թիրախային մակարդակը, բաշխման 90-րդ կամ 95-րդ տոկոսային կետը (percentile) և այլն: Համանման տրամաբանությամբ սահմանվում է նաև նվազագույն_i-ն: Աղյուսակ 2-ը ներկայացնում է ինդեքսի 10 հենասյուներից մեկի՝ «Աշխատանքի հնարավորությունների» բաղադրիչ ցուցանիշները, ինչպես նաև դրանց համար ֆիքսված նվազագույն և առավելագույն արժեքները:

Աղյուսակ 2. Սոցիալական շարժունության ինդեքսի «Աշխատանքի հնարավորություններ» հենասյան ցուցանիշները և դրանց առավելագույն ու նվազագույն արժեքները

6	Աշխատանքի հնարավորություններ	Առավելագույն	Նվազագույն
6.01	Գործազրկությունը բազային կրթությամբ աշխատուժի շրջանում (%)	25	0
6.02	Գործազրկությունը միջին կրթությամբ աշխատուժի շրջանում (%)	25	0
6.03	Գործազրկությունը բարձրագույն կրթությամբ աշխատուժի շրջանում (%)	25	0
6.04	Գործազրկությունը գյուղական տարածքներում (%)	25	0
6.05	Իգական և արական սեռի՝ աշխատուժի մասնակցության գործակիցների հարաբերություն	100	20
6.06	Խոցելի զբաղվածությունը (%)	60	0

Ստանդարտացումից հետո ցուցանիշները ագրեգացվում են հենասյուներում պարզ միջին թվաբանականի հաշվարկման միջոցով: Այնուհետև հաշվարկվում է սոցիալական շարժունության ինդեքսը՝ որպես 10 հենասյուների պարզ միջին թվաբանական (այսինքն՝ յուրաքանչյուր հենասյանը տրվում է 10% կշիռ): Մեթոդաբանությունից բխում է, որ ինդեքսը կարող է ընդունել արժեքներ 0-100 միջակայքում:

Առողջության ենթաինդեքսը ներկայացնում է տվյալ պետության կարողությունը՝ բնակչությանը ապահովելու որակյալ առողջապահական ծառայություններով: Այն շաղկապված է եկամուտների, ինչպես նաև հնարավորությունների անհավասարության հետ: Հատկանշական է, որ ԱՄՆ-ում *կյանքի սպասվող տևողության* տարբերությունը բնակչության ամենահարուստ 1%-ի և ամենաաղքատ 1%-ի միջև կազմում է շուրջ 15 տարի՝ տղամարդկանց դեպքում, և շուրջ 10 տարի՝ կանանց դեպքում: Նշենք նաև, որ ներկա մեծամասշտաբ տեխնոլոգիական տեղաշարժերի պայմաններում մեծ տարածում են ստացել այսպես կոչված «հուսահատության մահերը» (“death of despairs”), որոնք պայմանավորված են թմրանյութերի օգտագործմամբ, ալկոհոլի չարաշահումով, ինքնասպանությամբ և այլն[1]:

Կրթության ենթաինդեքսը ցույց է տալիս, թե որակյալ կրթական ծառայությունները որքանո՞վ են մատչելի տվյալ երկրի քաղաքացիների համար, ինչպիսի՞ն է մարդկային կապիտալի մակարդակը տվյալ երկրում, և որքանո՞վ է այն նպաստավոր հնարավորությունների հավասարության համար: Ի թիվս այլ

[1] «Հուսահատության մահերի» մասին առավել մանրամասն տե՛ս A. Case, A. Deaton, Deaths of Despair and the Future of Capitalism, Princeton University Press, 2020:

միջոցառումների՝ պետությունը պետք է երաշխավորի, որ ծնողները ունենան բավարար ժամանակ զբաղվելու իրենց զավակների դաստիարակությամբ և նախնական կրթությամբ՝ փոխանցելով նրանց այնպիսի հմտություններ, որոնք անհրաժեշտ են մշտական ուսուցման (lifelong learning) համար:

Տեխնոլոգիաների ենթաինդեքսը արտացոլում է տեղեկատվության, գիտելիքի և դրանց վրա հիմնված նորարարությունների դերը սոցիալական առաջխաղացման հնարավորությունների ստեղծման գործընթացում: Օրինակ՝ գաղտնիք չէ, որ COVID-19-ով պայմանավորված լոքդաունի ժամանակ «Զում (Zoom)» տեխնոլոգիան էապես բարձրացրեց հեռավար աշխատանքի արդյունավետությունը: Պետությունը ունի բացառիկ առաքելություն՝ չեզոքացնելու տեխնոլոգիական առաջընթացի հնարավոր բացասական ազդեցությունը ցածր որակավորմամբ աշխատուժի պահանջարկի վրա՝ ապահովելով աշխատանքային ռեսուրսների արդյունավետ վերաբաշխում:

Աշխատանքի ենթաինդեքսը ներկայացնում է իրավիճակը աշխատաշուկայում, այն է՝ աշխատանքի հնարավորությունների համադրությունը աշխատանք փնտրողների ունակությունների և հմտությունների հետ: Կրթության և տեխնոլոգիաների հասանելիությունը, իհարկե, կարևոր է, սակայն այն կարող է նպաստել սոցիալական շարժունության բարելավմանը հատկապես այն դեպքերում, երբ ստեղծվում են աշխատանքային հնարավորություններ բնակչության լայն շերտերի համար: Հետևաբար, պետական քաղաքականությունը պետք է միտված լինի նոր արտադրողական աշխատատեղերի ստեղծմանը: Ընդ որում՝ ցանկալի է, որ այդ աշխատատեղերը առաջարկեն արժանապատիվ աշխատավարձեր, ինչպես նաև աշխատավարձերի արդարացի բաշխում:

Ինստիտուտների ենթաինդեքսը ամփոփում է տվյալ տնտեսական համակարգում ներդրված սոցիալական երաշխիքների համախումբը: Հատկանշական է, որ սոցիալական պաշտպանությունը ներկայումս կարևորվում է նույնիսկ *ծայրահեղ ազատական* համարվող տնտեսություններում և հասարակություններում, քանի որ այն ամրապնդում է մակրոտնտեսական կայունության հիմքերը: Իսկապես, գործազրկության նպաստները, օրինակ, ոչ միայն մեղմում են սոցիալական լարվածությունը, այլև որոշակիորեն խթանում են պահանջարկը՝ հակազդելով տնտեսության ռեցեսիոն միտումներին:

3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱՄԱԴՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

2020 թվականին սոցիալական շարժունության ինդեքսը ՀՀ-ում կազմել է 54 միավոր (առավելագույն 100 միավորից), և ՀՀ-ն դիտարկվող 82 երկրների շարքում զբաղեցրել է 56-րդ հորիզոնականը:

Ամենաբարձր հորիզոնականը գրանցվել է երրորդ հենասյան՝ «Կրթության որակի» գծով. ըստ այս հայտանիշի՝ Հայաստանը աշխարհում 16-րդն է, իսկ վարկանիշային աղյուսակը գլխավորում է Շվեդիան (Աղյուսակ 3): Ավելին, այս հենասյան բաղադրիչ ցուցանիշներից մեկի՝ «միջնակարգ կրթության ոլորտում 1 ուսուցչին բաժին ընկնող աշակերտների» թվաքանակով Հայաստանը առաջինն է զեկույցի ընտրանքում ներառված 82 երկրների շրջանում: Խնդիրն այն է, որ ՀՀ մինչբուհական համակարգում բավական բարձր է ուսուցիչներ-աշակերտներ հարաբերակցությունը:

Հայաստանը պատկանում է դիտարկվող երկրների լավագույն 50%-ին նաև առաջին հենասյան՝ «Առողջության» կտրվածքով: Իսկապես, ըստ այս հայտանիշի՝ Հայաստանը զբաղեցնում է միջազգային վարկանիշային աղյուսակի 40-րդ հորիզոնականը (Աղյուսակ 3): Սա պայմանավորված է այն հանգամանքով, որ Հայաստանում բավական ցածր է դեռահասների ծնելիության գործակիցը, ինչպես նաև թերսնման մակարդակը 5-19 տարեկան անձանց շրջանում: Փոխարենը բավական բարձր է *առողջ կյանքի սպասվող տևողության գործակիցը՝ անհավասարության հաշվառմամբ*: Նշենք նաև, որ «Առողջություն» հենասյան մասով միջազգային վարկանիշային աղյուսակը գլխավորում է Կիպրոսը:

Ինչ վերաբերում է Հայաստանի ամենացածր հորիզոնականին, ապա այն գրանցվել է վեցերորդ հենասյան՝ «Աշխատանքի հնարավորությունների» գծով. ըստ այս հայտանիշի՝ Հայաստանը աշխարհում 77-րդն է, իսկ վարկանիշային աղյուսակը գլխավորում է Իսլանդիան (Աղյուսակ 3): Այս հանգամանքը ակնհայտորեն կապված է գործազրկության՝ ՀՀ տնտեսությունում դիտվող բարձր մակարդակի, ինչպես նաև աշխատուժի թույլ պահանջարկի հետ:

Աղյուսակ 3. Սոցիալական շարժունության ինդեքսը և նրա 10 հենասյուները ՀՀ-ում 2020թ.

		Արժեք	Հորիզոնական	Առաջատար երկիր
→	Սոցիալական շարժունության ինդեքս	54	56	Դանիա
→	Առողջություն	-	-	-
1	Առողջություն	77.3	40	Կիպրոս
→	Կրթություն	-	-	-
2	Կրթության հասանելիություն	36.8	73	Նիդերլանդներ
3	Կրթության որակ	79.4	16	Շվեդիա
4	Մշտական ուսուցում (Lifelong learning)	43.6	66	Շվեյցարիա
→	Տեխնոլոգիաներ	-	-	-
5	Տեխնոլոգիաների հասանելիություն	67.3	56	Դանիա
→	Աշխատանք	-	-	-
6	Աշխատանքի հնարավորություններ	42.8	77	Իսլանդիա
7	Աշխատավարձերի արդարացի բաշխում	44.5	52	Բելգիա
8	Աշխատանքի պայմաններ	54.7	54	Շվեդիա
→	Ինստիտուտներ	-	-	-
9	Սոցիալական պաշտպանություն	39.8	59	Դանիա
10	Ներառական ինստիտուտներ	53.0	54	Նոր Զելանդիա

Աղյուսակ 4-ը մատնանշում է, որ Հայաստանը Հարավկովկասյան տարածաշրջանի՝ զեկույցի հաշվարկներում ընդգրկված 3 երկրների շարքում 2020-ի դրությամբ զբաղեցրել է երկրորդ հորիզոնականը (54 միավոր, 56-րդ հորիզոնական)՝ զիջելով Վրաստանին (56 միավոր, 53-րդ հորիզոնական) և գերազանցելով Թուրքիային (51 միավոր, 64-րդ հորիզոնական):

Ուշագրավ է, որ և՛ Հայաստանը, և՛ Վրաստանը, և՛ Թուրքիան ունեն համեմատական առավելություն կրթության ենթաինդեքսի «Կրթության որակ» հենասյան գծով: Ընդ որում, դիտարկվող 82 երկրների ընտրանքում Վրաստանը 15-րդն է, Հայաստանը՝ 16-րդը, իսկ Թուրքիան՝ 45-րդը: Հատկանշական է, որ Թուրքիան զբաղեցնում է միևնույն 45-րդ հորիզոնականը նաև «Աշխատավարձերի արդարացի բաշխում» հենասյան կտրվածքով:

Նշենք նաև, որ Հայաստանը Հարավկովկասյան տարածաշրջանի առաջատարն է ըստ «Առողջություն» և «Սոցիալական պաշտպանություն» հենասյուների՝ միջազգային վարկանիշային աղյուսակում «հանգրվանելով» համապատասխանաբար 40-րդ և 59-րդ հորիզոնականներում: «Առողջություն» հենասյան մասով սա պայմանավորված է այն հանգամանքով, որ Հայաստանում բավական ցածր է *թերսնման տարածվածությունը (prevalence of malnourishment)*՝ 5-19 տարեկան անձանց շրջանում: Բացի այդ, համեմատաբար ցածր է նաև *դեռահասների ծնելիության* գործակիցը: «Սոցիալական պաշտպանություն» հենասյան մասով Հայաստանի առաջատար դիրքը կապված է տարածաշրջանի մյուս երկրների ցածր կատարողականի հետ: Երկու հենասյուների դեպքում էլ

տարածաշրջանի երկրորդ տեղում Թուրքիան է (համապատասխանաբար 46-րդ և 64-րդ հորիզոնականներ), իսկ երրորդում՝ Վրաստանը (համապատասխանաբար 57-րդ և 67-րդ հորիզոնականներ):

Աղյուսակ 4. Սոցիալական շարժունության ինդեքսը և նրա 10 հենասյուները Հարավկովկասյան տարածաշրջանի 3 երկրներում 2020թ.

		Հայաստան		Վրաստան		Թուրքիա	
		Արժեք	Հորիզոնական	Արժեք	Հորիզոնական	Արժեք	Հորիզոնական
→	Սոցիալական շարժունության ինդեքս	54	56	56	53	51	64
→	Առողջություն	-	-	-	-	-	-
1	Առողջություն	77.3	40	67.6	57	73.4	46
→	Կրթություն	-	-	-	-	-	-
2	Կրթության հասանելիություն	36.8	73	57.7	53	39.6	69
3	Կրթության որակ	79.4	16	80.1	15	66.4	45
4	Մշտական ուսուցում (Lifelong learning)	43.6	66	37.4	81	46.5	58
→	Տեխնոլոգիաներ	-	-	-	-	-	-
5	Տեխնոլոգիաների հասանելիություն	67.3	56	65.9	57	68.0	53
→	Աշխատանք	-	-	-	-	-	-
6	Աշխատանքի հնարավորություններ	42.8	77	50.4	71	50.1	73
7	Աշխատավարձերի արդարացի բաշխում	44.5	52	46.5	48	47.9	45
8	Աշխատանքի պայմաններ	54.7	54	56.9	49	40.1	80
→	Ինստիտուտներ	-	-	-	-	-	-
9	Սոցիալական պաշտպանություն	39.8	59	33.4	67	36.5	64
10	Ներառական ինստիտուտներ	53.0	54	60.1	44	44.1	75

Համաձայն Աղյուսակ 5-ի՝ Հայաստանը ԵԱՏՄ տարածքի՝ զեկույցի հաշվարկներում ընդգրկված 3 երկրների շարքում վերջինն է՝ զիջելով Ղազախստանին (65 (64.8) միավոր, 38-րդ հորիզոնական) և Ռուսաստանին (65 (64.7) միավոր, 39-րդ հորիզոնական):

Եթե, ինչպես արդեն նշվել է, Հայաստանի համեմատական առավելությունը «Կրթության որակ» հենասյունն է, ապա Ռուսաստանի դիրքը ամենից մրցունակն է «Աշխատավարձերի արդարացի բաշխում» հենասյան գծով (63.0 միավոր, 21-րդ հորիզոնական), իսկ Ղազախստանինը՝ «Աշխատանքի պայմանների» ուղղությամբ (69.1 միավոր, 16-րդ հորիզոնական):

Նշենք, որ Հայաստանը ԵԱՏՄ-ի առաջատարն է ըստ «Առողջություն», «Կրթության որակ» և «Ներառական ինստիտուտներ» հենասյուների՝ զբաղեցնելով միջազգային վարկանիշային աղյուսակի համապատասխանաբար 40-րդ, 16-րդ և 54-րդ հորիզոնականները: Ինչպես արդեն նշվել է, «Առողջություն» հենասյան դեպքում Հայաստանի համեմատական առավելությունը *թերսնման տարածվածության* և *դեռահասների ծնելիության* ցուցանիշների մասով է: Նշվել է նաև, որ Հայաստանի մրցունակ դիրքը «Կրթության որակ» հենասյան պարագայում կապված է դպրոցական և նախադպրոցական համակարգերում 1 աշակերտին բաժին ընկնող ուսուցիչների և դաստիարակների մեծ թվաքանակով: Ինչ վերաբերում է «Ներառական ինստիտուտներ» հենասյանը, ապա Հայաստանի առաջատար դիրքը ԵԱՏՄ տարածքում պայմանավորված է բացառապես այն հանգամանքով, որ մյուս երկու երկրներում կոռուպցիայի մակարդակը անհամեմատ ավելի բարձր է, իսկ ներառական ինստիտուտների, այդ թվում՝ հանրային ծառայությունների արդյունավետությունը՝ անհամեմատ ավելի ցածր: Առողջություն» և «Կրթության որակ» հենասյուների դեպքում ԵԱՏՄ-ի երկրորդ տեղում Ռուսաստանն է (համապատասխանաբար 43-րդ և 32-րդ հորիզոնականներ), իսկ երրորդում՝ Ղազախստանը (համապատասխանաբար 53-րդ և 33-րդ հորիզոնականներ): Ինչ վերաբերում է «Ներառական ինստիտուտներ» հենասյանը, ապա ԵԱՏՄ-ի երկրորդ տեղում Ղազախստանն է՝ 63-րդ հորիզոնականով, երրորդ տեղում՝ Ռուսաստանը՝ 76-րդ հորիզոնականով:

Աղյուսակ 5. Սոցիալական շարժունության ինդեքսը և նրա 10 հենասյուները ԵԱՏՄ տարածքի 3 երկրներում 2020թ.

		Հայաստան		Ռուսաստան		Ղազախստան	
		Արժեք	Հորիզոնական	Արժեք	Հորիզոնական	Արժեք	Հորիզոնական
→	Սոցիալական շարժունության ինդեքս	54	56	65	39	65	38
→	Առողջություն	-	-	-	-	-	-
1	Առողջություն	77.3	40	75.0	43	71.4	53
→	Կրթություն	-	-	-	-	-	-
2	Կրթության հասանելիություն	36.8	73	70.4	31	69.9	32
3	Կրթության որակ	79.4	16	75.0	32	74.7	33
4	Մշտական ուսուցում (Lifelong learning)	43.6	66	46.1	61	51.1	46
→	Տեխնոլոգիաներ	-	-	-	-	-	-
5	Տեխնոլոգիաների հասանելիություն	67.3	56	73.6	44	69.7	51
→	Աշխատանք	-	-	-	-	-	-
6	Աշխատանքի հնարավորություններ	42.8	77	74.0	34	74.9	30
7	Աշխատավարձերի արդարացի բաշխում	44.5	52	63.0	21	61.2	25
8	Աշխատանքի պայմաններ	54.7	54	62.3	32	69.1	16
→	Ինստիտուտներ	-	-	-	-	-	-
9	Սոցիալական պաշտպանություն	39.8	59	64.3	29	56.5	43
10	Ներառական ինստիտուտներ	53.0	54	43.0	76	49.7	63

«Գլոբալ սոցիալական շարժունության ինդեքս - 2020» զեկույցը փաստում է նաև, որ.

- Հնարավորությունների հավասարության մակարդակով աչքի են ընկնում սկանդինավյան երկրները, մասնավորապես՝ Դանիան, Նորվեգիան, Ֆինլանդիան, Շվեդիան և Իսլանդիան: Վատագույն կատարողականը ցուցաբերել են Բանգլադեշը, Պակիստանը, Կամերունը, Սենեգալը և Կոտ դ'Իվուարը:
- Միջին հաշվով, ըստ հիմնական զարգացած և զարգացող տնտեսությունների, բնակչության վերին 10%-ը վաստակում է շուրջ 3.5 անգամ ավելի շատ եկամուտ, քան ստորին 40%-ը:
- Հնարավորությունների հավասարության տեսանկյունից հիմնական մարտահրավերները երեքն են՝ ցածր աշխատավարձեր, սոցիալական պաշտպանության անբավարար մակարդակ, մշտական ուսուցման (lifelong learning) սահմանափակ հնարավորություններ:

- Եթե զեկույցում ներառված երկրներում սոցիալական շարժունության ինդեքսը բարձրանա 10 միավորով, ապա մինչև 2030 թվականը կգեներացվի շուրջ 4.41 տոկոսային կետով ավելի բարձր տնտեսական աճ:
- Սոցիալական շարժունության խթանման առանցքային գործիքը հարկային համակարգն է, մասնավորապես՝ պրոգրեսիվ հարկման ռեժիմը: Էական նշանակություն կարող է ունենալ նաև որակյալ կրթության մատչելիության ապահովումը:

4. ԱՄՓՈՓՈՒՄ

Եկամուտների անհավասարությունը արդի տնտեսությունների հիմնական մարտահրավերներից է: Նրա հաղթահարումը կարևոր է ոչ միայն սոցիալական արդարության, այլև տնտեսական արդյունավետության տեսանկյունից: Խնդիրն այն է, որ անհավասարությունը թուլացնում է ամբողջական պահանջարկը, քանի որ բնակչության ավելի հարուստ շերտերը սպառում են իրենց եկամտի ավելի փոքր մասնաբաժինը:

Սույն աշխատանքում ուսումնասիրվել է եկամուտների անհավասարության ամենից խնդրահարույց դրսևորումներից մեկը, այն է՝ հնարավորությունների անհավասարությունը: Վերջինս ենթադրում է, որ հասարակության որոշ խմբեր ցածր մեկնարկային եկամուտների պայմաններում զրկված են սոցիալական առաջխաղացման հնարավորություններից: Նման իրավիճակում ձևավորվում է ցածր սոցիալական շարժունություն՝ հանգեցնելով հասարակական դիրքի միջսերնդային փոխանցման (intergenerational transmission of advantage and disadvantage):

Համաձայն Համաշխարհային տնտեսական համաժողովի կողմից 2020 թվականին հաշվարկված սոցիալական շարժունության ինդեքսի՝ Հայաստանը 82 երկրների շարքում զբաղեցնում է 56-րդ հորիզոնականը՝ բնորոշվելով ինդեքսի 54 միավորով: Հարավկովկասյան տարածաշրջանից ներառված մյուս երկու երկրների շարքում Վրաստանը գերազանցում է Հայաստանին 3 հորիզոնականով (56 միավոր, 53-րդ հորիզոնական), իսկ Թուրքիան զիջում է Հայաստանին 8 հորիզոնականով (51 միավոր, 64-րդ հորիզոնական):

Հայաստանը Հարավկովկասյան տարածաշրջանի առաջատարն է ըստ «Առողջություն» և «Սոցիալական պաշտպանություն» հենասյուների: «Առողջություն» հենասյան մասով սա պայմանավորված է այն հանգամանքով, որ Հայաստանում բավական ցածր է թերսնման տարածվածությունը (prevalence of malnourishment)՝ 5-19 տարեկան անձանց շրջանում, և համեմատաբար ցածր է դեռահասների ծնելիության գործակիցը: «Սոցիալական պաշտպանություն»

հենասյան մասով Հայաստանի առաջատար դիրքը կապված է տարածաշրջանի մյուս երկրների ցածր կատարողականի հետ:

ԵԱՏՄ տարածքից զեկույցի հաշվարկներում ներառված են երեք երկրներ՝ Հայաստանը, Ռուսաստանը և Ղազախստանը: Առաջատարը Ղազախստանն է, որը 65 (64.8) միավորով զբաղեցնում է միջազգային վարկանիշային աղյուսակի 38-րդ հորիզոնականը: Նրան հաջորդում է Ռուսաստանը՝ 65 (64.7) միավոր և 39-րդ հորիզոնական: Տարածաշրջանի եռյակը եզրափակում է Հայաստանը:

Նշենք, որ Հայաստանը ԵԱՏՄ-ի առաջատարն է ըստ «Առողջություն», «Կրթության որակ» և «Ներառական ինստիտուտներ» հենասյուների: Ինչպես արդեն նշվել է, «Առողջություն» հենասյան դեպքում Հայաստանի համեմատական առավելությունը թերսնման տարածվածության և դեռահասների ծնելիության ցուցանիշների մասով է: Հայաստանի մրցունակ դիրքը «Կրթության որակ» հենասյան պարագայում կապված է դպրոցական և նախադպրոցական համակարգերում 1 աշակերտին բաժին ընկնող ուսուցիչների և դաստիարակների մեծ թվաքանակով: Ինչ վերաբերում է «Ներառական ինստիտուտներ» հենասյանը, ապա Հայաստանի առաջատար դիրքը ԵԱՏՄ տարածքում պայմանավորված է բացառապես այն հանգամանքով, որ մյուս երկու երկրներում կոռուպցիայի մակարդակը անհամեմատ ավելի բարձր է, իսկ ներառական ինստիտուտների, այդ թվում՝ հանրային ծառայությունների, արդյունավետությունը անհամեմատ ավելի ցածր:

Նշենք նաև, որ սոցիալական շարժունությունը ամենաբարձրն է սկանդինավյան երկրներում՝ Դանիայում, Նորվեգիայում, Ֆինլանդիայում, Շվեդիայում և Իսլանդիայում: Վատագույն կատարողականը ցուցաբերել են Բանգլադեշը, Պակիստանը, Կամերունը, Սենեգալը և Կոտ դ'Իվուարը:

Սոցիալական շարժունությունը և հնարավորությունների հավասարությունը խթանելու նպատակով ՀՀ կառավարությունը պետք է բազմապատկի ներդրումները մարդկային կապիտալում, այն է՝ առողջապահության և կրթության ոլորտներում: Էական նշանակություն կարող է ունենալ նաև սոցիալական պաշտպանության համակարգի կատարելագործումը, ինչպես նաև պրոգրեսիվ հարկային կանոնների սահմանումը:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

*Նյութի ամբողջական կամ դրանից **քաղվածքների** վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան ակտիվ հղման տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը:*